

и условиями» կասէ պարոնը Պարսկաստանի մասին գրելիս: Իմ գործածած դըմըլներէնը (demeli) և գըրմանճներէնը (kermandji) բոլորովին տարբեր են քրդական այն բարբառներէն, որոնք գործածական են Պարսկաստանում, Ռուսաստանում և Վասպուրականում: Այդ բանը կըխոստովանի և յայտնի քրդագէտ պ. Յակոբ Ղազարեանը: Ասածներիս իբր ապացոյց բերեմ «курды въ персiи» գրքէն իմ մի բանի խօսքերս.

ա. Венгъ даишъ=հրաւէր հարսանեաց.

բ. Вену, лия=բաւ է, առ.

գ. Эй, достя, кэйнэ отё бромё мнѣ=Այ խնամի, ծախիբ ինձ աղջիկդ.

դ. Keinéé khale éme be rako ethia=Աներոջս աղջիկը՝ եկ ննջիր այստեղ:

ե. Allah-itchoun vannan, ki jéné ema keiné bi=Յանուն Աստուծոյ կերդուեմ, որ իմ կինը կոյս էր.

զ. Keïne éten halal nan vord ou=աղջիկդ հալալ հաց է կերել:

Բաւական են օրինակները: Դրանք նախադասութիւններ են, որ պ. Առաքելեանի պապն էլ լսած չէ թերևս: Բացի այդ ես հաւատացած եմ, որ պ. Առաքելեանը նոյն իսկ գըրմանճներէն քրդերէնը չգիտէ, որովհետեւ այդ գրքոյկում գըրմանճի խօսքերն աշխատեցուած են, ուղղագրութեան աններելի սխալներ արած..., մի բան, որ կապացուցանէ պ. Առաքելեանի տգիտութիւնը գըրմանճերէնում:

Առ այժմ ես կը բաւականանամ այսքանով, վստահ որ ընթերցողն արդէն կազմեց մի փոքր գաղափար պ. Առաքելեանի վերաբերմունքի մասին դէպի ուրիշի սեպհականութիւնը:

Ի դուր չէինք անուանել այդ տեսակներին «մտաւոր տղաբուկ»:

Այս այն անձինքն են, որոնք քիթը ներս են կոխում հոգեւոր և աշխարհիկ ամեն գործերի մէջ և կառավարում, ուրիշների մտաւոր աշխատանքով ապրում և միշտ էլ ուրիշներին հայհոյում:

Նւ այսպիսի անմաքուր ձեռներ վստահանում են կեղտոտել ուրիշ գործողների բղանցները: ՀԱՅ

«Հայրենիքի կարօտը», Ա—Դօ-ի, Մ. Գ. Բուրգ, 1905

Ով հասարակութեանը տալիս է մի տպագրական երկ, նա չպիտի մոռանայ որ բացի շատ մանր-մունր պարագաներից

պահանջուով է. 1. որ գրուածքի տեման սկզբից մինչև վերջը կազմի գլխաւոր յենակէտը, իսկ միւս մասերը, այսպէս ասած դէտալները, չանցնեն իրանց կարեւորութեան չափի սահմանից ի վնաս գլխաւոր տեմայի, 2, որ երևոյթների հոգեբանական մասը չլինի սխալ, շարուն ու անտեղի ոճերը չթուլացնեն ընդհանուր տպաւորութիւնը և 3, որ գրուածքի գեղարուեստական մասը լինի անպայման մաքուր, տեխնիկական, բոված ու չափած, գերծ կրկնութիւններից, ծամծմելականութիւնից, հակասութիւններից և այլն:

Քննական այս չափական միութիւնը գործիք ունենալով, թող մէկը մի քիչ ուշքով կարդայ պ. Ա.—Դօ-ի յիշեալ բրօշուրը, որպէս զի համոզուի. թէ որքան շատ ու մեծ սխալներ կարելի է զետեղել նոյն իսկ մի շատ փոքր բրօշուրում:

Բրօշուրի բովանդակութիւնը նորութիւն չէ:

Գաղթական Մուրադը մէկն է այն հարիւրաւոր զոհերից, որ Տաճկահայոց երկրից մազապուրծ՝ փախել է մեր երկիրը, Կովկաս, կորցնելով ամեն բան: Ազատուելով քրդի սրից, նա Կովկասում ուզում է աշխատանք գտնել, հիւանդանում է թուրքախտով, սկսում է մուրալ, «դախլդար դուքանչիներից» մէկը նրան անպատուում է «աներես» բառով, այդ «աներեսը» այնքան խոր վիրաւորում է Մուրադի ինքնասիրութիւնը, որ նա առաւել ևս է ընկճւում և ներքին ցաւից՝ մեռնելու չափ հիւանդանում: Այդ հիւանդ դրութեամբ նրան պատահում է իր երկրացի Ապրօն, որ Կովկասի մեծ քաղաքները ման գալուց և յաջողութիւն չգտնելուց յետոյ վերադառնալիս է լինում իր՝ փոքրիշատէ խաղաղուած՝ հայրենիքը: Մուրադը աղերսում է նրան իրան էլ տանել և հիւանդ, թուրքախտով հիւժուած մարդը քաշ է տալիս իր ոտները և գնում է, որ գոնէ վերջին շունչը իր երկրում փչի, իր հարազատների մօտ գերեզմանում հանգչի: (Տես 10 երես, Մուրադի իր խօսքերը):

Ահա այս պատկերը պ. Ա.—Դօն համարում է լինել «հայրենիքի կարօտը», բայց թէ ինչ հիման վրայ, դա չի երևում գրուածքի նիւթից և վերլուծութիւնից:

Երբէք Մուրադն ու Ապրօն չէին մտածիլ «Երկիր—վաթան» յետ դառնալու, եթէ նրանց բանը լաւ և յաջող գնար Կովկասում, եթէ Մուրադը չհիւանդանար, եթէ չդառնար այնքան ջղային, որ աներես «դուքանչու» «աներեսներ» բառից չշարժէր և չպատէր նրա երեսին միւսներից հաւաքած կոպէկները, եթէ նրան յաջողուէր այդ կոպէկներով միջոց ունենալ մի քիչ «խնձր զինքը ժողովելու», կամ Ապրօյին բաղդը ժպտար

Բազում և նա հարստանար... Այո, ասում եմ, այդ դէպքում նրանց մէջ երբէք չէր խօսի «կարօտը»:

Եթէ Մուրադին յաջողուէր Կովկասում տոկուն աշխատանքով և տարիների ընթացքում ձեռք բերել և գործ, և առևտուր, և տուն ու տեղ գնել, այգու և կալուածքի տէր դառալ, հասարակական որոշ դիրք ստեղծել իր համար, և մի օր՝ չկարողանալով տանել իր հայրենիքից հեռանալու անձկալից կարօտը, վեր կենար կիսագնի ծախէր իր տուն ու տեղը, ծախձէր իր խանութի ապրանքը և գնար հայրենիք, ուր թէև նրան էլ կճնշէր քրդական լուծը, բայց հօ նա կմխիթարուէր, որ իր պապերի օջախումն է և իր հայրենակիցներին ցաւակից, հաւասար չափով կրելով տիրող բէժիմի ծանրութիւնը, մինչև արշալոյսի ծագելը այս քամբաղտ երկրում:

Ահա, եթէ այս հանգամանքներում հայրենիք վերադառնար Մուրադը, դա կլինէր խիստ բնական և պ. Ա.—Դօն իրաւունք կունենար բրօշուրի ճակատին դրօշմել այդ մեծահնչիւն վերնագիրը—«Հայրենիքի կարօտը»:

Բայց իրօք ոչ մի այդպէս բան չկայ.

Գաղթական Մուրադը փախչում է Կովկաս իր վաթանի «սարսափներից»: Այդ սարսափներից կարելի է նոյն իսկ հոգեկան հիւանդութիւն ստանալ: Բայց գաղթականի ջղերը դեռ մի քիչ ամուր են, նա տանում է Վեր երեխաների մորթոտուելը, իր տների այրուելը, իր անդ-անդաստանի քար ու քանդ լինելը՝ և չոր գլխով ու ճամփորդական մախաղով իրան գցում է Բարդղղ լեռներից այս կողմը՝ Կովկաս, իր պէս հաբլւաւոր թշուառների հետ:

«Վաթանի» սարսափներից յետոյ Կովկասը իր խաղաղութեամբ, կայքի, կեանքի, մարդկային իրաւունքների ազատութեամբ այնպէս է գրաւում գաղթականին, որ նա սրտի խորքից պիտի անիծի այն օրը, որ ծնուել է այնպէս անբաղտ «եքկրում» ուր կորցրեց ոչ միայն իր ողջ «ռնիմ չունիմը», այլ և մարդկային հասակի «գէնջ տարիները»:

Բայց նա չի յուսահատւում. ամեն բան կորցնելուց յետոյ աշխատում է դարձեալ իրան դրստել, ոչինչ թէ միջոցները մի քիչ դժուար են և ինքնասիրութեան դիսլոյդ, բայց քանի դրօշ արժէ դախլու «աներեսներ» բառը իր վաթանում կրած անծայր վիրաւորանքների մօտ, որ նա լռիկ տաքել էր մինչև վերջին կատաստրոֆը: Եւ գաղթականը սկսում է գործել...

Սակայն ինչ որ կարելի է անել տոկունութեամբ, նոյնը

անկարելի է անել քայքայուած օրգանիզմով: Գաղթական Մուրադը ֆիզիքապէս անկարող է լինում դիմանալ այդ ծանր մաքառմանը և հիւանդանում է, շաբաթներով պարկուճ, թոքախտ ստանում: Նա մի ներքին դառը գիտակցութեամբ զգում է, որ «իր քանը վերջացած է», որ նոր նա «մարդ» դարձողը չի: Նա ընկճւում է և անիծում այն օրը, որ իր ընտանիքի հետ չմեռաւ հայրենի օջախի մոխիրների մէջ, Բայ նրա համար խիստ ծանր է զգալ, որ նրան չյաջողուեց այս ազատ երկրում՝ գոնէ մի քիչ իրան ապահովել, և ներքին սրտնեղութիւնից (съ досады) անէծք է թափում «դախլիներին» և միւսաների գլխին ու վեր է կենում, որ «նայ իր «երկիրը», ուր գոնէ վերջին անգամ կկարողանայ պարկել իր հարազատների աճիւնների մօտ և սպասել մինչև «հնչման փողոյն Գաբրիէլի...: Սա մի խիստ բնական երևոյթ է և ոչ մի առնչութիւն չունի «Հայրենիքի կարօտի» վեհ զգացմունքի հետ:

Այս վերլուծութիւնից կարծեմ պարզ է, որ պ. Ա.—Դօ-ի բրօշուրը հիմնովին սխալ է կազմած. ներքին նիւթը չի արդարացնում հեղինակի նպատակը: Այդ մեծ սխալը այնպէս է փնասում բրօշուրի գոյութեան իրաւունքին (reson d'être). որ խօսել միւս պակասութիւնների մասին աւելորդ կլինէր:

Բայց պէտք է վերջացնել:

Տեսէք պ. Ա.—Դօ-ն որքան խորամանկ եւ ճարպիկ է վարուել: Ո՛վ կարող է գտնել աւելի վեհ միտք, քան հայրենիքի կարօտը, գաղթականների ցանկալի վերադարձը, «վաթանի» ներկայ դժոխք դրութեան նկարագրութիւնը, Կովկասի «դախլչու» փշացած տիպը, որ վիրաւորում է մինչև ոսկրները վիրաւորուած գաղթականին... վերջապէս ով չի ծափահարել հեղինակին, որ նա խրախուսում է իբր թէ գաղթականի վերադարձը...

Այս բոլոր մօտիմները այնքան զրաւիչ են, որ մոռացնում են մի բոլոր գլխաւոր սխալը:

Մուրադին հայրենիքի կարօտը չէր քաշում, այլ գերեզմանի, եթէ այսպէս կարելի է ասել, որովհետեւ որքան որ պ. Ա.—Դօ-ն խիստ է նկարագրում վաթանի սուրսափները, այնքան ընկալան պիտի գտնէր փախածների ցանկութիւնը— երբեք չվերադառնալ «այնտեղ»: Եւ դա երեաց վերջին փորձից, երբ կառավարութիւնը ուզեց յետ ուղարկել մի խումբ գաղթական: Պէտք էր տեսնել այդ «ոչխարների խմբի» վայնասունը, որ չէր ուզում գնալ «քրդի սպանդանոցը»: Այս

լաւ յայտնի է պ. Ա.—Դօ-ին, որովհետեւ նա էլ, այն ժամանակ մի քիչ գործում էր»:

Վերջապէս ինչ ցանկալի բան է գտել հեղինակը, որ աշխատել է և կաշուից դուրս եկել, որ արծաթի այդ սխալ տեման: Ճշմարիտ հայրենասէրը անելի լուրջ միջոցներ պիտի մտածի և ընդհակառակը՝ զգայ մի ծանր վիշտ, որ եթէ մեր վաթանը դատարկուելուց յետոյ, մենք լցնենք նրան Մուրադի պէս թոքախտիկներով և Ապրոյի պէս կեանքի ծախորդիկներով—դա կնշանակի վաթանը երկու անգամ կործանել...

Գրուածքի տեխնիկան.—այս բանի մասին հեղինակը շատ քիչ գաղափար ունի—ամբողջը գրուած է շաբլօն ձևերով ու ճերբան արածի» սխտեմով, լի սխալ դարձուածներով, տաղաւալի կրկնութիւններով, անհարթութիւններով և հակասութիւններով: Բերենք մի քանի օրինակներ.—Երրորդ երեսում նա գրում է. «մի ղեղնութիւն անցել էր յուզուած դէմքի վրայով» (Մուրադի): Այն տպաւորութիւնն է ստացւում, որ Մուրադը մի քիչ կարմիր դէմք ունէր, բայց մի քիչ ներքե, նոյն երեսում, մենք տեսնում ենք, որ նա կրծքի ցաւ ունի, 2 շաբաթ հիւանդ պարկած, բոլորովին հիւծուած, զուլաստուած, աշխատանքի անընդունակ դարձած: Այս մէկ հակասութիւն:

Զորրորդ երեսում.—«նա գլորուեց փալասի կտորի վերայ և որպէս փայտը անշարժ մնաց».—իսկ անմիջապէս յետոյ գրում է. «երբեմն մէկ, երբեմն միւս կողքի վրայ շուռ գալով տանջւում էր...»—Միևնոյն ժամանակ ինչպէս կարելի է համաձայնարժ մնալ փայտի պէս», համ էլ «շուռ ու մուռ գալ»: Այս երկու:

Եօթերորդ երեսում.—«նրա մէջ խօսում էր հայրենիքի կարօտը, նա ներկայացնում էր մի կատաղի բողոք...» հայրենիքի կարօտի զգացմունքը խիստ հեռու է բողոքի զգացմունքից:

Մինչև եօթերորդ երեսը արդէն որոշ գրուած է Մուրադի ով լինելը, նորից այս երեսում սկսում է Մուրադի պատմութիւնը, «ով էր Մուրադը» շաբլօն ձևի հարցով, և այդ կրկնութիւնը համարեա նոր բան չի ասում:

Մուրադի հիւանդութեան մասին մէջ ընդ մէջ կրկնում է 3, 4, 5, 6, 8 և 10 երեսում:

«Դախլիլ» հասցրած վերաւորանքի մասին մէջ ընդ մէջ կրկնում է ութ անգամ: Ութ կրկնութիւն տասն երես գրուածում...

Բազմաթիւ շաբլոն ոճերը (հրացանը պայթեց, ըռպէն սր-
տաշարժ էր, տեսարանը յուզիչ, ներկան սոսկալի էր և այլն)
— այն տպաւորութիւնն են թողնում, որ կարծես հեղինակը
ձեռքի տակ ունի ոճերի քառարան և օգտուում է նրանից, թէև
յաճախ անգիտակցօրէն:

«Կարօտի» զգացմունքի վերլուծութեանը համարեա ոչինչ
տեղ չի տուած, իսկ կողմնակի բաները — հիւանդ մարդու հի-
ւանդ զառանցանքը, վաթանի սարսափները, ընութեան տեսա-
րանի նկարագրութիւնը բռնում են համարեա բոլոր կրեսները:
Նախավերջին երեսում Ապրօն համոզում է Մուրադին. —
«Դու խիւանդ ես, կեցի, աղեկցի, սորա կգաս»: Վերջացնում է
խօսքը և մի մեծ էլ վերջակէտ դնում: Բայց նոր տողից հեղի-
նակը գրում է. — «Ապրօյի խօսքը կիսատ մնաց...»

Ձև է, ամենքը գրում են. «խօսքերը կիսատ մնացին»,
Ա.—Դօ-ն էլ է ուղեցել անթիւ ձևերի հետ, այդ ձևն էլ «ճխտել»
բրօշխրի մէջ, բայց ձևերի անգիտակցօրէն գործածելը ծիծա-
ղելի բան է միշտ:

Լեզուն հարթ է, բայց ոչ զուրկ սխալներից: Վերջին ե-
րեսում. — «Մինչև որ տանտէրը կմտնէր պահարան մի փոքր
հաց բերելու... հացը պահարանումն են պահում, բայց վերց-
նելիս՝ պահարան չեն մտնում»:

Ուղղագրութիւնը — կոյր «Մշակի» ուղղագրութիւնը, նոյն
իսկ «պատուասէր» բառը մեծ վ-ով է գրում — «պատվասէր»
8 երեսում: Մի երկու հատ էլ նոր բառ է հնարել. «օրհնիտք-
ներ» (8 երես), «արտցունքի» (11 երես): Մեր լեզուն ունի ար-
տասուք կամ արցունք բառերը:

Ողջ գրուածքը թողնում է անշնորհք վարպետի կարած
«սերթուկի» տպաւորութիւն: Օձիքը լայն, մի թևը աւելի մօտ
օձիքին, միւսը մի քիչ ցած կպցրած ուսատեղից, բուզմեն գօտ-
կատեղից մի թիզ վերև, իսկ երբ առջևի կոճակները «մէր գը-
ցես»՝ փեշերից մինը միւսից 2-3 վերջով բարձր ու ցածր
կկանգնի: Այս անճոռնի հագուստը եթէ հագցնես պ. Ա.—Դօ-
ին, նա իրաւամբ կվիրաւորուի և չի թոյլ տայ, որ իրան ծաղ-
րեն, սակայն չնայելով դրան, նա խիստ սառնասիրտ և նոյն
իսկ մի լաւ ըան անողի յաւակնութեամբ փաթաթում է ըն-
թերցող հազարաւոր հասարակութեան վրին իր նոյնքան «ծու-
ռը ձևած» բրօշխրը, համարելով հասարակութեանը այն
անխօս գրաստը, որի վրայ ամեն խամ հեծնող «քշել» է ուղում
սովորել...

Pour la bonne bouche.

Վերջապէս ի՞նչ է «Հայրենիքի կարօտը» պ. Ա.—Դօ-ի:

Պատկեր է իրական կեանքից, թէ՛ տենդենցիօզ գլուածք, մի ցանկալի գաղափար-գաղթականների դարձը-խրախուսող: Դա չի որոշուում: Պ. Ա.—Դօ-ն ինքն էլ չի նշանակել:

Փաթեթի վերջին երեսում կարդում ենք. «Նոյն կազմողի—Մակեդոնիա—սպառուած»... և այլն:

Ուրեմն մակաբերենք, որ սա էլ կազմած բան է:

Բառի նոր եւ տարօրինակ զործածութիւն:

Կազմում են կրօնի և այլ դասագրքեր, կազմում են համբալ գրողների համար ուղեցոյցներ, վերջապէս կազմում են ամեն տեսակ գրքեր... կազմարարները:

Իսկ շարժւոյ ձևերից, հատ ու կտոր գրաւիչ մօտիւններից, գեղեցիկ գաղափարներ բուրոզ վերնագրներից, մաշուած, ծածած տեմաներից, հոգեբանական սխալ երևոյթներից կազմե՛լ անճոռնի և սխալ բրօշիւրներ... Դրա համար էլ ջոկ կազմարարի ընդունակութիւն է հարկաւոր, որի արհեստանոցը գտնուում է Երևան, պ. Ա.—Դօ-ի մօտ:

ԱՐՇԱՄ ՏէՐ-ԽԱԶԱՏՐԵԱՆՑ

Երեւան

1. Das armenische Hymnarium. Studien zu seiner geschichtlichen Entwicklung von Nerses Ter-Mikaelian, Archimandrit von Edschmiadsin. Leipzig 1905

Վերջին տասնամեակի ընթացքում մեր ճեմարանաւարտ կուսակիցները Գերմանիայում աստուածաբանութիւն ուսանելով՝ մի շատ գովելի սովորութիւն իւրացրին. նրանք իրենց աւարտման շարադրութեան նիւթը փոխանակ ընդհանուր գիտութեան շրջանից վերցնելու, ընտրում են հայոց եկեղեցու անցեալին կամ դաւանաբանութեան վերաբերեալ խնդիրներ և լուսաբանում՝ հիմնուելով մեր ձեռագիր աղբիւրների ու օտար գիտնական հետազօտութիւնների վրայ:

Ահա այսպիսի մի աշխատութիւն է Ներսէս Տէր-Միքայէլեան վարդապետի «Das Armenische Hymnarium» = Հայոց շարականոցը, որ նորեւրա լոյս է տեսել գերմաներէն լեզուով Լայպցիգում:

Բարձրապատիւ հեղինակն այդ աշխատութեան մէջ պարզում է՝ թէ ի՞նչ բան է այժմեան մեր շարականոցը, թէ այժմեան շարականոցը որքան հնութիւն ունի և թէ առաջ ինչպէս էր և վերջապէս՝ թէ ըստ եկեղեցական աւանդութեան ռիքեր են շա-